# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 18

**Բնակչության սոցիալապես անապահով և առանձին /հատուկ/ խմբերի ցանկում չընդգրկված անձանց անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ուղեգիր տրամադրող մշտական գործող մարզային հանձնաժողովի 2015թ. ապրիլի 1 -ին կայացրած նիստի**

Նիստի մասնակիցում են հանձնաժողովի 7 անդամներ:

Օրակարգում՝

1. Անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ուղեգիր տրամադրելու խնդրանքով ՀՀ Վայոց ձորի մարզպետին դիմած քաղաքացիների դիմումների քննարկում:

Զեկուցող՝ հանձնաժողովի քարտուղար Ց.Բաբայան:

Հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց՝

Խաչիկ գյուղի բնակիչ Ռուբիկ Մանուկյանի և Վայք քաղաքի բնակչուհի Գոհար Մուրադյանի դիմումներն ուղղված ՀՀ Վայոց ձորի մարզպետին՝ պետպատվերի շրջանակներում բուժվելու համար ուղեգիր ստանալու խնդրանքով:

Քննարկման արդյունքում հանձնաժողովը

**ՈՐՈՇԵՑ**

1. Ելնելով բժշկական ցուցումներից և նրա ընտանիքի սոցիալապես անապահով վիճակից Խաչիկ գյուղի բնակիչ Ռուբիկ Մանուկյանին և Վայք քաղաքի բնակչուհի Գոհար Մուրադյանին պետական պատվերի շրջանակներում համապատասխան բուժում ցուցաբերելու համար նախապատրաստել ՀՀ Վայոց ձորի մարզպետի /թիվ 8 և թիվ 9/ միջնորդագրերն ուղղված ՀՀ առողջապահության նախարարին:

Հանձնաժողովի նախագահ՝ Հ.Սարգսյան

Քարտուղար՝ Ց.Բաբայան